



ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՍ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա  
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. Վ Ա Ջ Գ Է Ն Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. Վ Ա Ջ Գ Է Ն Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափառ Եղբայր ի Զրիստոս.

Ուրախութեամբ տեղեկացանք, որ ողջամբ վերադարձած էք Ա. Աթոռ և ձեռնարկած Ձեր բարձր պաշտօնի պարտաւորութեանց:

Նոր տարուան և Ա. Ծննդեան կրկնակ տօներուն առթիւ Մեր Ձեզի լլած շնորհաւորագիրը լիալոյս ենք որ ստացած էք իր ատենին: Մենք ստացած ենք Ձեր շնորհաւորական գրութիւնը, որուն համար սրտագին շնորհակալութիւններ կը յայտնենք:

Այս առթիւ կ'ուզենք յայտնել, որ բարձրաշնորհ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահեան, Մեր հրաւերին ընդառաջելով, 31 դեկտեմբեր 1963, յետ միջօրէին, վերադարձաւ Ա. Աթոռ՝ առաջնորդութեամբ Լիբանանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Տաճատ սրբապան արքեպիսկոպոսի և երեք վարդապետներու, ու տեղաւորուեցաւ յատկապէս իրեն համար յարդարուած միաբանական սենեակին մէջ:

Կը յայտնենք նաև, որ 19 յունուար 1964, կիրակի օր, Կաթողիկոսարանիս Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, եպիսկոպոս պիտի ձեռնադրենք ու օծենք Ա. Աթոռիս միաբաններէն գերապատիւ Տ. Տ. Գարեգին և Արտաւազդ ծայրագոյն վարդապետները:

Կը փափաքէինք նաև իմացնել Ձեզի, որ Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ Տ. Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի վաղաժամ վախճանման առաջին տարելիցին առթիւ, 16 փետրուար 1964, կիրակի օր, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերուն մէջ, եկեղեցական փառաշուք հանդիսութիւններով և հոգեհանգստեան պաշտօնական արարողութիւններով պիտի ոգեկոչենք երանաշնորհ Հայրապետին մա-

քուր լիշատակը և պիտի աղօթենք Անոր բիւրեղի նման ջինջ ու պայծառ հոգւոյն խաղաղութեան և հանգստեան համար:

Սիրելի՛ Վեհափառ Եղբայր ի Զրիստոս.

Այսու գրով կը լայտենք Ձեզի, որ այս առիթով կը սպասենք, որ Ս. Երուսաղէմի մէջ Ձեր կողմէ տրուած հաւաստիքներուն համաձայն, Մեզի ուղղեալ պաշտօնագրով մը օրհնէիք անթառամ լիշատակը Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկալիշատակ Տ. Տ. Զարեմ Ա Կաթողիկոսին և ժաղթէիք, որ լուսոյ Արարիչը Տեր Յիսուս Զրիստոս, Իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ Աստուծոյ հաւատարիմ ծառային և Մեր սրտահաղորդ Եղբօր բարի հոգին և դասէ վԱյն ի շարս ճշմարիտ և երանելի հայրապետաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

Կը վստահեցնենք Ձեզ, որ Ձեր այս գրութիւնը ոչ միայն սփոփիչ դեր պիտի ունենայ Մեր կսկծալից սրտին վրայ, այլ և օգտակար ազդեցութիւն պիտի ունենայ սիրոյ ոգիին պորացման և անոր գործնականացումին Մեր հաւատացեալներու կեանքին մէջ:

Աղօթելով Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ անշարժութեան և Ձերոյ Վեհափառութեան արեւշատութեան համար, մեամ եղբայրական սիրոյ ողջունիւ,

Աղօթակից

Խ Ո Ր Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

13 յունուար 1964  
ԱՆԹԻԼԻԱՍ

